ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» մարտի 2024թ. N 12-Հ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 42/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1826-Ն որոշման հավելվածի 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան և ավտոկայանատեղի գնելու ցանկություն ունեցող հանրային ծառայողների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել գերատեսչությունների կողմից Քաղաքաշինության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացվող գերատեսչական տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերը գերատեսչություն ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մարտի 22-ը:

4. Մասնակցության ապահովման համար Կոմիտեի գանձապետական ավանդային 900018009655 հաշվեհամարին 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մարտի 25-ը:

5. Սույն հրամանի 2-րդ կետում նշված գերատեսչական տեղեկանքների Կոմիտե ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի ապրիլի 3-ը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

Պարտականությունները կատարող՝

3/7/2024

X

ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN DAVIT 2102800415

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2024 թվականի մարտի 27 ի N 12- Ա հրամանի

_____ գլխավոր քարտուղար (աշխատակազմի ղեկավար)
(գերատեսչության անվանումը)
պարոն/տիկին _____ - ին
(գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անուն, ազգանուն)
_____
_____ - ից
(դիմում-հայտ ներկայացնողի անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան և ավտոկայանատեղի գնման մասնակցության

Ծառայողի անուն, ազգանուն և հայրանուն	Ծառայողի աշխատավայրի հասցեն	Ծառայողի էլեկտրոնային փոստի հասցեն	Ծառայողի հեռախոսահամարը	Ծառայողի անձնագրային տվյալները (ՀԾՀ և անձը հաստատող փաստաթուղթ, ում կողմից և երբ է տրվել)	Ծառայողի հաշվառման հասցեն	Ծառայողին պատկանող բանկային հաշվեհամարը	Ծառայողի ընտանիքի կազմը (ամուսնու անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթուղթ)

Սույն դիմում-հայտին կից ներկայացնում եմ՝

1. ծառայողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ կազմված ____ էջից.
2. ամուսնության, ամուսնալուծության վկայականների պատճենները՝ կազմված ____ էջից.
   - ծանոթացել եմ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 19-ի N1826-Ն Որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներին.
   - հավաստում եմ, որ հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման որևէ ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման վերաբերյալ իմ և/կամ ամուսնուս կողմից պայմանագրեր չեն կնքվել.

_____
(դիմում-հայտը ներկայացնելու ամսաթիվը)

_____
(դիմում-հայտը ներկայացնողի անուն, ազգանունը)

_____
(դիմում-հայտը ներկայացնողի ստորագրություն)

Դիմում-հայտի լրացման ուղեցույց

Բոլոր դաշտերը լրացնելը պարտադիր է

1" «Ծառայողի աշխատավայրը» սյունակում լրացվում է դիմում-հայտը ներկայացնելու պահին Ծառայողի աշխատանքի գտնվելու վայրի հասցեն:

2" «Ծառայողի հեռախոսահամար» սյունակում նշվում է ծառայողի անձնական բջջային հեռախոսահամարը:

3" «Ծառայողի անձնագրային տվյալներ» սյունակում լրացվում է Ծառայողի հանրային ծառայությունների համարանիշը, անձնագրի սերիան (նույնականացման քարտի համարը), ում կողմից և երբ է տրվել:

4"«Ծառայողին պատկանող բանկային հաշվեհամարը» սյունակում լրացվում է Ծառայողի անվամբ ՀՀ որևէ բանկում բացված բանկային հաշվեհամարի տվյալները: Սույն ծրագրով սահմանված դեպքերում վճարված 400,000 ՀՀ դրամ կանխավճարը վերադարձվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմում-հայտում նշված հաշվեհամարին:

5"«Ծառայողի ընտանիքի կազմը» սյունակում լրացվում է ծառայողի ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը, իսկ ամուսնացած չլինելու դեպքում դրվում է (-) նշանը:

6.«Ծառայողի ընտանիքի կազմը» սյունակում լրացվում է ամուսնու անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի (նույնականացման քարտի) համար

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2024 թվականի մարտի 7-ի N 12-Ա հրամանի

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

_____
(Գերատեսչության անվանումը)

Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում բնակարան և ավտոկայանատեղի գնելու պայմաններին բավարարող դիմումատուների վերաբերյալ

Աղյուսակ 1:

Դիմումատուի նույնականացման համարը	Դիմումատուի (անուն, ազգանուն, հայրանուն)	Դիմումատուի աշխատավայրի հասցեն	Դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեն	Դիմումատուի հեռախոսահամարը	Դիմումատուի անձնագրային տվյալները	Դիմումատուի բանկային հաշվեհամարը	Դիմումատուի ընտանիքի կազմը (ամուսին)

Սույն տեղեկանքին կից ներկայացվում են դիմումատուների դիմում-հայտերը:

_____
(տեղեկանքը կազմելու ամսաթիվը)

_____
(Գերատեսչության գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.